

անիրաւ որոշումները վերաքննելու համար – անիրաւ խորհուրդներուն անիրաւութիւններն ո՞վ պիտի քննէ:– Ասոնք ըսելէն յետոյ Բ. Դուռը հետեւեալ վիճակագրութեամբ կկնքէ իւր պատասխանը.

79% Միւսիւման.

17% Հայ.

4% այլեւայլ հասարակութիւններ:

Եթէ Վանայ, Կարնոյ, Տիարպէքիի եւ այլն կողմերի մէջ Հայերը 17% կը կազմեն՝ ասել է թէ 53%օր վերջերս կամ քիւրտերէ սպանուած են եւ կամ այդ վիճակագրութիւնն ընող պաշտօնեաներէն:

24 Յունիս

Մինչեւ որ Զմիւռնիոյ մէջ բնակարան մը հաստատուի՝ խտիվի *հարէմն* Նաբօլի պիտի բնակի:

25 Յունիս

Գարատաղի եւ Բ. Դրան միջեւ պաշտօնական յարաբերութիւնները խզուցան: Գարատաղի դեսպանը պիտի մեկնի: Քօնսուլիտներն ինկան: Եթէ Յունաստանի դեսպանն ալ մեկնի՝ կօնսուլիտներն ալ աւելի պիտի իյնան: Իսկ եթէ քանի մը դեսպան մեկնէն մեկնելու լինին՝ քօնսուլիտը բոլորովին կը վերնայ...:

Ապէտին բաշայ առ կախ մնացած խնդիրներու համար բանակցութեան մտաւ Գարատաղի դեսպանին հետ, որ յետ ձգեց իւր մեկնիլը:

**

Սուրիոյ կուսակալ Միտհատ բաշայ յիշեալ նահանգին համար բարենորոգմանց ծրագիր դրկած է կայս. կառավարութեան:

Ամեն կողմէ ծրագիր... Ապէտին բաշան որ կողմ որ դառնայ՝ իւր դէմը ծրագիր մը կ'ելնէ. դիւանագիտութեան *Բուրսօնէաք* դարձաւ:

–Առ սա ծրագիրն, աղէկ է:

–Առ սա ծրագիրն, շատ լաւ է:

–Տո՛ւր սա Եանիան, որ քեզի շատ աղէկութիւններ պիտի բերէ:

–Տուր սա Տուլչինեօն, որ խալըսիս:

Մեզի ամեն կողմէ խրատ, յորդոր եւ ծանուցագիր կը դրկեն՝ մինչդեռ մենք դրամի միայն պէտք ունինք: